Քաղաքապետարան
01.09.2022թ.

Ք. Երևան

Հ. Գալստյանի անվ. թիվ 83 ավագ դպրոց

Դասղեկի աշխատանքային պլան

2022 – 2023 ուսումնական տարի

10^{6} – րդ դասարան

Դասղեկ՝ Ա. Խաչատրյան

ՈՒսումնական տարվա ընթացքում կատարվող աշխատանքներ

1.Դասարանի մասնակցությունը համադպրոցական, տարածքային միջոցառումներին:

2.Կազմում ենք դաստիարակչական աշխատանքների թեմատիկան

Սեպտեմբեր - զրույց՝ Ինչպե՞ս դառնալ լավ համադասարանցիներ

Հոկտեմբեր- այցելություն՝ Եռաբլուր պանթեոն

Նոյեմբեր-այցելություն՝ թատրոն, թանգարան, կինոթատրոն

Դեկտեմբեր- զրույց՝բնական աղետների և դրանց հետևանքները

Հունվար- զրույց՝նվիրված Հայոց բանակի կազմավորմանը

Փետրվար- զրույց՝ նվիրված կրթություն ստանալու կարևորությանը

Մարտ- զրույց՝Կնոջ դերը հասարակության մեջ

Ապրիլ- զրույց՝ Ապրիլի 24

Մայիս-զրույց՝ Անկախ երկրում ապրելու կարևորությունը թեմայով և այցելություն Սարտարապատ հուշահամալիր:

3.Աշխատանք դասարանի դժվար դաստիարակվող, սոցիալական Խնդիրներ ունեցող և ծնողազուրկ սաների հետ:

4. Դասալսումներ

5.Ծնողական ժողովներ

6. Անհատական աշխատանք ծնողների հետ

7.Աշխատանք ծնողական խորհրդի հետ

8.Տարեկան հաշվետվություն

Կրթա-դաստիարակչական աշխատանքի հիմնական ուղղությունները

Հոգևոր դաստիարակություն: Հոգևոր դաստիարակության նպատակն է աշակերտներին ծանոթացնել ավագ սերնդի կուտակած հոգևոր արժեքներին, կապ հաստատել անցյալի ու ներկայի հոգևոր արժեքների միջև:

Գեղագիտական դաստիարակություն:Գեղագիտական դաստիարակության նպատակն է ձևավորել և զարգացնել սանի մոտ գեղագիտական աշխարհայացք իրեն շրջապատող աշխարհի վերաբերյալ:

Ֆիզիկական դաստիարակություն: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ձևավորել ֆիզիկապես զարգացած, կոփված անձնավորություն:

Աշխատանքային դաստիարակություն: Աշխատանքային դաստիարակության նպատակն է նախ օգնել սանին կարևորել աշխատանքի առկայությունը յուրաքանչյուրի կյանքում այնուհետև պատկերացում տալ աշխատանքի կազմակերպման հմտությունների վերավերյալ:

Բնապահպանական դաստիարակություն: Բնապահպանական դաստիարակության նպատակն է սաներին խորը և կայուն գիտելիքներ հաղորդել բնության և հասարակության փոխազդեցության վերաբերյալ:Սանին օգնել գիտակցել բնության ազգային հարստություն լինելը:

Դպրոց- ընտանիք կապը: Դպրոց-ընտանիք ակտիվ կապը ապահովում է սանի ջերմ, հարգալից վերաբերմունքը դեպի դպրոցը, ուսուցիչը, դասղեկը և ուսումնական գործընթացը:

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

ՈՒսումնական շաբաթներ	ՈՒսումնադաստիարակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	Գիտելիքի դերը	02.09	Դասղեկ-աշակերտ
2	Կարգապահ դասարան	16.09.	Դասղեկ
3	ՀՀ անկախության պատմություն	23.09.	Դասղեկ-աշակերտ
4	Հայրենասիրություն	30.09.	Դասղեկ-աշակերտ
5	Ընկերասիրություն	07.10.	Դասղեկ-աշակերտ
6	ՈՒսուցչի նկարագիրը ըստ սաների	14.10.	Աշակերտ
7	Եթե ես լինեյի դասղեկ	21.10.	Աշակերտ
8	Գեղեցիկ վարվելակերպ	28.10.	Դասղեկ-աշակերտ
9	Հանդուրժողականություն	04.11.	Դասղեկ-աշակերտ
10	Ի՞նչ է գլոբալացումը	11.11.	Դասղեկ
11	Ի՞նչ է պատասխանատվությունը	18.11.	Դասղեկ-աշակերտ
12	Ի՞նչ է սերը	25.11.	Դասղեկ-աշակերտ
13	Ի՞նչ է նշանակում լինել լավ մարդ	09.12.	Դասղեկ-աշակերտ
14	Երազանքների դերը մեր կյանքում	16.12.	Աշակերտ
15	Ինչո՞ւ չծխել	23.12.	Դասղեկ
16	Ի՞նչ է առաքինությունը	30.12.	Դասղեկ-աշակերտ
17	Ընտանիքի դերը մարդու կյանքում	13.01.	Դասղեկ
18	Պատերազմի արդյունքները հասարակության կյանքում	20.01.	Դասղեկ-աշակերտ
19	Արդի աշխարհի մարտահրավերները	27.01.	Դասղեկ-աշակերտ
20	Իմ սիրած գիրքը	03.02.	Աշակերտ
21	Մեզ շրջապատող միջավայրի մաքրության կարևորությունը	10.02.	Աշակերտ-դասղեկ
22	Վստահություն և դավաճանություն	17.02.	Դասղեկ-աշակերտ

23	Ի՞նչ է արվեստը	24.02.	Դասդեկ-աշակերտ
24	Կրոն	03.03.	Դասդեկ
25	Իդեալ	10.03.	Աշակերտ
26	Ո՞վ է գեղեցիկ մարդը	17.03.	Դասդեկ-աշակերտ
27	Ինչպե՞ս ընտրել մասնագիտություն	24.03.	Դասդեկ
28	Շնորհակալ լինելու արվեստը	07.04.	Դասդեկ-աշակերտ
29	Հայ կնոջ նկարագիրը	14.04.	Աշակերտ
30	Մոր դերը ընտանիքում	21.04.	Աշակերտ-դասդեկ
31	Հայոց Եղեռն	28.04.	Դասդեկ
32	Հայաստանի առաջին հանրապետություն	05.05.	Դասդեկ-աշակերտ
33	Էքսկուրսիաների կարևորությունը	12.05.	Աշակերտ
34	ՈԻսումնական տարվա ամփոփում	19.05.	Դասդեկ-աշակերտ